ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 19-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի <<ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 60-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայասնահի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության <<Բյուջետային համակարգի մասին >> օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 2020 թվականի ապրիլի 13-ի թիվ 27.3/7892 գրությունը և պետական փորձագիտական եզրակացությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի <<Արմավիրի մարզի Գայ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 60-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1. Գայ համայնքի բյուջեի եկամտային մասում ավելացնել հետևյալ եկամտատեսակները

1) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/ - 1633.6 հազ. դրամ

2) Տեղական տուրք՝ համայնքի վարչական տարածքում վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին ժանը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար - 120.0 հազ. դրամ

3) Տեղական տուրք՝ համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար - 200.0 հազ. դրամ

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 60-Ն որոշման ծախսային մասում կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) 4563.6 հազ. դրամ նախատեսել 04/5/1-ի 4251 հոդվածին

2) 1633.6 հազ. դրամ նախատեսել 09/5/1-ի 4637 հոդվածին

3) 09/05/1-ի 4511 հոդվածը պակասեցնել 4243.6 հազ. դրամով

4) ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 142244.8 հազ. դրամ նախատեսել 09/1/1-ի 5112 հոդվածին

5) 04/9/1-ի 8411 հոդվածում նախատեսել հողի իրացումից եկամուտ 17453.1 հազ. դրամ և բաշխել 9/1/1-ի 5112 հոդվածին

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԼԻԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՐԱՄ

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ